



ԵՐԾՈՒՒ

ՄԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹԻՌԻՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕԻ
ՅԱՐԺՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՂԱՐԱԳԱՅ
ՈՐ Ի ՂԱՆՏՈՍՊ

ԱՎԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՀԱՐՑՆ

ԴԱՒԻԹ ԱՆՑԱԳՔ ՀԱՅ ՓԻԼՍՈՓԱՅ

Փնտք քնդ Հայաստան՝ երկիր օրհնութեան, խանձարուր
ընդ հանուր մարդկան սիւխ, արգանդ բարեպաշտ, դրսեւ
Աստուածատուն, որ բրտնաջան աշխատողի երկանց փոխարէն
աւատարեւ կը հառուցանեն. անբեր երկրի վրայ կրակաւոր
աշխատողացը նման՝ անմխիթար չեւ դատաւարներ քեզի

Համար աշխատող ձեռքեր : 46 կամ 50 տարի Հազիւ տե-
ւեց երանելի Թարգմանչաց սկեզիների դարն , որուն միջոց
փոքր ինչ Ս. Ժմաստու թեան բշտի Այրարատաց կողերուն վրայ
ստատուութեամբ Արշակունի թագակալին Վառանց , մեծին
Սահակայ եւ Մեսրոպայ շողշողալ տեսց : Բայց զարմանք իբ
նայիս որ ՚ի վեր քան գկարծիս սքանչելի օրհնութեան պտուղ-
ներ կ'հասցունէ , այս է Խորենացւոյ նման բերթողահայրեր ,
Եղիշէի նման ընտիր պատմագիրներ , Եղնկոյ նման հրաշարի
Աստուածաբաններ , Ղեւոնդի նման սրտաշարժ եւ ազդու ա-
տենախօսներ , զարմանալի Արքիւններ , Մամբրէներ եւ որ ըս-
քանչելին է Դաւիթիս նման անյաղթ Հայ փիլիսոփաներ :
Որոց անուան քաղցր յիշատակու թիւեր մեծ միլիթարու թեամբ
կ'լեցունէ : Ծշմարիտ հայրենապիլի սիրտն . փառք կուտայ Հայ-
ստանի քաջաբեր հոգոյն , օղոյն եւ մանաւանդ անոր վերեւն
կամարացեալ լուսահասան կապուտակ երկնից ճարտարապե-
տին , որ շնորհեր է նախաբնակ Հայաստանու այսպիսի մէկ ճնաշ-
խարհիկ պարզ եւ մը եւ փիլիսոփայ մը անյաղթ վերտառու-
թեամբ , այս գանձ անկորուստ է եւ անկողոյտելի . այս փառք
տանն , Հայկոյ առաւել փայլեցաւ եւ պիտի փայլի քան իւր
պերճապտակ թագաւորաց անցաւ որ ճիւղաթիւն եւ փառք ,
որ իրենց հետ անհետացան եւ շատ շուտ կորան :

Այս Դաւիթ անյաղթ փիլիսոփայիս վարուց պատմութիւն
նը իւր հետ Աթէնք , Արատանդնուպոլիս գնացող ընկերակցացը
փարուց յար եւ նման իմանալով կ'մնայ յատկապէս առ այս
երանելիս վերարեբեալ քանիմը ծանօթութիւններ՝ որոնց վը-
րայօք պիտի խօսիմք :

Նախապէս դիտնալու է՝ որ այս Դաւիթ անյաղթս բերթո-
ղահայր Մովսէս Խորենացւոյ բնորոգին էր , որուն Համար աշ-
տնրաժան միշտ անոր հետ կ'ըջէր . իւր (Այսպէս Գիւրգիս)
մակադրական անունն , անանուն եւ ՚ի մէջ անծանօթ , հին
պատմութենէ մ կ'իմանամք , որ այս պատահմամբս եղած է :

Այն ժամանակներ՝ կոէ նոյն պատմագիրն , սովորութիւն
կար Աթենացւոց մէջ , որ եօթ տարին անգամ մը պղնձեայ

սիւն մը կը կանգնեցնէին հրապարակի մէջ եւ այն սիւնին ձախտն խիստ համառօտութեամբ իմաստալից ծածկագրութիւններ կ'դէժին . եւ բոլոր Յունաստանի իմաստասիրաց մը տաւորական զօրութիւնն փորձելու համար , այն հրապարակն կը կոչուէին՝ որ նոյն ծածկագրութեան իմաստն բացատրեն : Այս վերոգրեալ եօթեակս եկաւ լրացաւ նոյն միջոցին , որ ժամանակ որ մեր երանելի Թարգմանիչներն Աթէնք գնացած չեղեկացի ուսմամբ կ'բաջանային եւ երբոր այն ժամանակի ծածկագրութիւնը՝ ալ շատ նեղացուց հելլենացուց քաջհըմուտ իմաստասերներն եւ գրէ թէ անհնարին եղաւ անոր միտքն բացատրել , մեր քաջ փիլիսոփայն Դաւիթ՝ նորոգ զարգացեալ 'ի վարժս ուսմանց եւ եռանդուն շատ , հրաման կը խնդրէ ստեղծեն եւ Սինկլիտոսէն , որ ինքեան շնորհեն այն ծածկագրութեան միտքն բացատրել :

Ուստի մեծ արտօրանօք ատեան կ'կազմուի բոլոր հելլենացի իմաստուններէն եւ մեծամեծ աստիճանաւորներէն : Որոնց ներկայութեան նորադարձ Հայ փիլիսոփայն Դաւիթ սքանչելի բացատրութեամբ նոյն կարճաբանութեան իմաստն գոհացուցիչ կերպով կ'բացատրէ , միանգամայն չեղեկացի լեզուով ստեղծարանական ձառ մի եւս խօսելով նոյն ծածկաբանութեան մտաց փայօք : Այս տեղ ապա մեծ ծափահարութեամբ ամենացուց ատեանը կ'գոռայ ասելով՝ կեցցէ՛ ՀԱՅՆ կեցցէ՛ Դաւիթն անյաղթ . մէյմալ կ'նայիս ոսկեհուռ եւ ընտիր ակունքէ զարդեր եւ յաղթանակի նշաններ կ'բերուին , որոնցմով Դաւիթն շքեղապանծ զարդարուած ատենի վերին գահն կ'բազմի , եւ իւր գաստիկց ընկերներուն ալ մեծ ձայնով կանչել կ'տրուի կեցցէ՛ Դաւիթ յաղթօղ կամ Դաւիթ անյաղթ Հայ փիլիսոփայն :

Ըհնայ այս փառաւոր յաղթանակովս Աթենացուց իմաստաւորն հանդիսարանին մէջ , իւր ինքեան արժանաւոր տիտղոսն կ'նդունէ , 'ի պարծանս բոլոր Հայաստան աշխարհի եւ 'ի քաջաշէրութիւն որդւոցն նորին :

Ասկէջ 'ի զատ կսեն թէ՛ ուրիշ փիլիսոփայական հարցմունք

ներ եւ վիճաբանութիւնք եւս ըրածէ նոյն Հելլեն իմաստա-
սիրաց հետ եւ ամէն պարագայի մէջ յաղթող հանդիսանա-
լոյն համար , խկապէս արժանի եղած է (Անհաղթ փիլիսո-
փայ) մակադրական անուան , եւ անխորաբար թէ յազգայ-
նոց եւ թէ ՚ի հելլենացւոց պատուաւոր յարգութեամբ կրկն-
չուի եղեր :

Ասոր դրաւոր աշխատութիւններ տեսնողն եւ անոր լեզ-
ուադէտ յառաջադիմութիւնը մտածողն ինքն ինքեան կարէ
մակարեւել այն պատուաւոր անձին խկապէս յաղթող լինելն
եւ թէ ինչ աստիճան կատարելութեան հասած է եղեր , որ
ինքն տարաշխարհիկ հայմը լինելով՝ Աթենի մէջ Հելլենացի
իմաստասիրաց մթին ծածկադրութիւնը կ'կարողանայ լռեծել
եւ հռետորական վիճաբանութեան մէջն ալ անոնց տասէն բը-
սանէն անյաղթելի կ'մնայ : Ուրեմն կեցցէ Հայաստան՝ որ
այսպիսի ճիշտարհիկ օրհնութեան պտուղներ կարէ հասցու-
նել : Օրհնեալ լինի այն քաղցր օդ եւ անուշ ջուրն եւ հող՝
որ այսպիսի կարգաւորեալ բազմազօր ուղեղներ կարէ բաղա-
դրել :

Հելլենաբանութեան մասին քաջ էր՝ ինչպէս որ յայտնի
է . իսկ հայկաբանութեան մասին , առաւել է մանաւանդ այն
խաչի Բարձրացուցէք հրաշալի ճառին մէջ՝ որն որ Գլուտ Կա-
թողիկոսի խնդրանօքը շարադրեց . որուն խնդրանաց նամակը
իբր գեղեցիկ վկայական մը Անյաղթիս անտալիւտ վարօւցը
հոս դնել չիպիտի մոռանամ , որ է այս :

ԹՈՒՂԹ ԳԻՒՏԱՅ ԱՌ ԴԱՒԻԹ

Երկնաւորին ցանկացեալ մեծութեան , դառող փանծու եւ
Աստուածային լուծեան յուսոյն , որով ձգեալ հասեր ՚ի Թի-
րապէս տենջումն ՚ի գերակայ եւ ՚ի պատարուն պայման , գը-
տեալ եւ ծածկեալ , բացայայտեալ բոց բարեաց բարեօրա-
պէս բարուց քոց , զոր ՚ի վարժ վաճառի վարդապետութեան
քում խնդրելի է մեզ խուզողացս , խօսել խորհրդով ՚ի խաչն
Քրիստոսի , զնորին երախտեացն հատուցանել , որ առ ՚ի մէջ

գոհութիւն , փրկելոցս փրկաւէտ փայտին փառաց փեսային ։
 Չի պաշտելի է մեզ եւ պատուելի եւ պանծալի ըստ Պաւղոսի
 պարծել 'ի պատուական պառկն Յիսուսի , եւ 'ի թագն նորոյս
 սիովնի . զի բարձցի Հերեսիոտաց հերձուածն , եւ խլեսցի յա-
 դարակաց փուշք , եւ որովմն սատանայական սերմանց , որ 'ի-
 մարդ յուսան եւ ոչ յԱստուած ։

ԳԻՒՏ

Գագաշեալ եւ գերեջման 'ի Գարշապար ,
 եւ Տահու յերջաւոր , Կրոնապ հայցեմ ,
 Հայոց հօփ հովոնապ եւ վերադիպօջ
 քան Սրշախոնեաց ։

Այս ներբողական ճառ խաչիս Գիւտ Սաթողիկոսի երեւ-
 ւակայածէն աւելի ճարտարութեամբ շարադրեց ։ Որուն ինչ
 աստիճան պերճաբանութեամբ արուեստակերտեալ լինելն՝ հե-
 տոմուտ եղողն անոր ընտիր մատենագրութիւնը թող առնէ
 կարգայ եւ իմանայ ։

Կան քաջի Անյաղթ փիլիսոփայիս ասկէց 'ի զատ ուրիշ շատ
 Գործքեր ալ՝ որոնք են .

Ա. Սահման իմաստախորհելեան . առատ հմտութեամբ լեցուն
 եւ զարմանալի մտաց ծնունդ , ինչպէս որ լաւ պիտի երեւա-
 կայէ մտադրութեամբ ընթերցողն ։

Բ. Ամենայն չար քանջելի է . համառօտ ճառ մի է , բայց զօրա-
 ւոր ձեռնարկութեամբ լեցուն ։

Գ. Հինգ առաժա . յաղագս Բաժանման ։

Դ. Ներածութիւն Պորտի-րի ։

Ե. Վերլուծութիւն 'ի ներածութիւնն Պորտի-րի ։

Զ. Տան սպորոգութիւն . Արիստոփելի ։

Է. Մեկնութիւն սպորոգութեանն Արիստոփելի ։

Ը. Արիստոփելի յաղագս Տեկնութեանց ։

Թ. Մեկնութիւն Պերիարձեհիս Գրոյն ։

Ժ. Յաղագս Քերականին պարճառ ։

ԺԱ. Պապսոս-իւն յաշագս աշխարհի . Թարգմանութիւն Արիստոտէլի Թղթոյն՝ որ առ մեծն Աղէքսանդր, ընտիր հայկաբա-
նութեամբ :

ԺԲ. Յաշագս աշխարհի . Թարգմանութիւն . եւ այլն .
Այսչափ եւ ասկէց աւելի ծանրակշիւ արդիւնաւորու-
թեամբ փայլեցաւ երանելիս Դաւիթ իւր ժամանակին մէջ եւ
յաւիտեան պիտի անմահանայ իւր զարմանաւոր հանձնորակց
աշխատութենով եւ եկեղեցաշէն ջանասիրութեամբն :

Փառաւորեալ եւ վկայեալ փիլիսոփայ էր եւ Հելլենացի
գրագիտութեամբ միշտ յառաջադէմ . բայց լաւ դիտցաւ
յարգել իւր սիրելի աղքէն եւ հայրենին, որուն մէջ ծնած էր
եւ իւր ազնիւ հասակն ի չափ կատարման հասուցած . ուրկէ
առած էր այն շնորհաց սկզբնատարերբը . որոնցմով կը փառա-
ւորուէր . անոր համար չհեռացաւ բնաւ անոր սիրուն հողերէն
եւ նորին լուսաւորութեան համար անխոնջ աշխատելն . եւ
այն հայրենի հողոյն վրայ իւր մահկանացու կեանքը լրացու-
նելով բարի մահուամբ առ հանուր երջանկացելոց պսակա-
ղիրն Կնաց :

Այսպէս գնացին յերկինս նա եւ Մովսէս, Եղիշէ, Եզնակ,
Մորիւն, Մամբրէ եւ միւս շատեր . գնացին՝ միանդամայն իւ-
րեանց հետը տանելով այն ոսկեղինիկ Ս . Իմաստութեան դարն :
Անագորոյն բախտն չարար արժանի զմարտին Հայաստան՝ որ
երկար ժամանակ անոնց առատահոս լուսածոր աղբերականց
Ս . կայլակներն վայելեր : Լուսափայլ արեղակունք Այրարա-
տեան աշխարհի Ս . Սահակ եւ Մեսրոպ եւ նոցին երկանց
արժանաւոր պտուղ հանձնարափայլ Թարգմանիչքն եւս երբ
գնացին հեռացան մահուամբ, դիտես թէ կրկին պատեց ըջ-
Հայաստան չարայիշատակ իաւարն աղիտութեան : Արկին
հայածին մանկտին իւր սեաւ բախդի ստուերին տակը նստաւ
իւրաց . լացաւ երկար եւ իւր արտասուքը իւր ծնօտին վրայ
չորացեալ մնաց . լացաւ մինչեւ խաղաւ, եւ քիչ մնաց՝ որ ան-
հշան Ասորի, Խպտի եւ իւր դրացի արեւելեան աղղերուն
պիտի հաւասարէր, եթէ վերնախնամ աջն զթալով ԺԱ . դա-

բու Ներսէսներ չնմայիր ազգիս եւ հիմայ զույց քան զանոնք եւս խաւարեալ եւ վատթար մէկ մը էինք : Բայց դու հոգիւն Աստուծոյ եւ փառք սիրելի ազգիս յասուկ ուշիմութեան , որ ընդդէմ լեռնայեալ դժուարութեանց եւ ահռելի բարբարոսութեանց քաջապէս պատերազմելով՝ անկուրուստ պահեց շատէն քիչ այն սրբազան յիշատակաց արժանաւոր մասուհիներն , որ հիմայ այս լուսաւորեալ դարոյս մէջ 'Նեմայ ջրհորի մէջն թաղուած' ողջակիզաց կրակին նման , կրկին կենդանանալով անմուտ լուսաւորութիւնմբ կարտափայլէ , եւ պիտի փայլի շատ լուսահեղ իմաստութեան սրբազան տաճարներ կազմելով : Լաւ մտածելու է . եթէ թարգմանչաց դարու փայծեռանդն ուսումնասիրութիւնը մենչեւ ժեր դարեր անընդհատ տեւելու լինէր , հիմայ ինչ կատարելութեան չէր հասած՝ ազգային գրագիտութիւնը . Եւրոպայու որ ազգ հիմայ կարողէր մեզի հաւասարիլ . արդեօք Գաղիան , Անգղիան , Թէ Իգալիան , որոնց արթնութեան թիւ երկու հարիւրէն շատ վեր չանցնիր . Ռուսիան , որ նոյն ժամանակները յետին բարբարոսութեան մէջ էր . արդարեւ ոչ մէկ ազգ հայոց կատարելութեան եւ լուսաւորութեանը հիմայ հասած էր : Ունեինք հիմայ այնպիսի համալսարաններ եւ կարգաւորեալ ճննարաններ , որոնց մէջ փափաղէր պիտի Եւրոպացի մանկտին աղաչանօք մոտել եւ քաղաքականութիւն , մարդալարութիւն , փիլիսոփայութիւն , մաթեմատիքայ , բնական գիտութիւն , աստեղագալիսութիւն , եւ ուրիշ կենցաղօգուտ ուսմունքներ ուսանել Հայացի օրհնեալ լեզուաւ : Ունէր անշուշտ ազգերնիս հիմայ քաջ աստեղագէտ Հերշէլներ , բայրոյական փիլիսոփայ ճոյսներ , բանաստեղծ Լամարտիններ , ընտիր բնագէտներ . որոնք Հայաստանիս առատարեր հողոյն վրայ իւրեանց փորձերն եւ երկրաբանական գննութիւնքը պիտի կատարէին . Լաւ ճգրտաւաճ աշխարհագէտներ , որ Հայաստանիս նախնի դաւառաց սահմաններն գծելն եւ ծովերն չափէին . քաջ մեդէնագէտներ , որ Հայաստանիս բարձր լեռներն հարթելով երկաթուղիներ շինէին , հեռագրական պալատաւ արեւմուտը արեւել-

քին հետ կապած էին եւ Ազգ ամենայն ինչպէս որ հիմայ Եւրոպայ՝ ի Հայաստան կ'դիմէր ձեռքերնին փոքրիկ ճրագ մը առած . որ Այրարատայ երկնաշող բարձրութեան լուսէն վառեն եւ իւրեանց հայրենիքը տանեն : Հայ անուէր հիմայ կը թնդար պատուաւոր կերպով հանուր ազգաց գրուածոց եւ ամսաթերթից մէջ . երանի կուտար հիմայ Եւրոպայ ՀԱՅ անուան եւ փափաքելով կ'ցանկար իւր վրայ առնելու :

Իսոյց աւանդ այս անբաւ բարութիւններս ամէնքն ալ առնուածութեան եւ անմիաբանութեան զոհ եղան , անգինն վաճառեցաւ առանց գնոյ . այրի միաց ցանկալին Հայաստան . մեծին Այրարատայ բարձր կատարը չձագեց այս Ա . լուսաւորութեան գեղանշոյլ ծիածանն . իւրեան որդիք , « Որ երբեմն էին անձամբ անձին , այժմ կարօտ մնացին այլոց գանձին » : Յրուեցաւ բաժանեցաւ ողորմելին Հայաստան դժոխածին Վասակներու , վեստ Սարգիսներու անիծապարտ չար գործքերով . եւ այն ցրուեալ դաղթական վիճակին մէջն ալ շատ տեղ եւ շատ անգամ կորսնցուց իւր հայրենի ազատութեանը հետ՝ ուսումն եւ կրօնասիրութիւն ալ՝ դիւապատներ նիկոլներու եւ անոնց նման ետքը խորամանկութեամբ եւ աստուածամարտ չարութեամբ :

Ի վերայ այսր ամենայնի՝ հազար անգամ դոհուծիւն Աստուծոյ , որ ազգին հաւատարիմ՝ եւ աւանդապահ մեծ մասն իւր նախնի ձկնքերն չէ կորսնցուցած . լուսակիր կայծառիկ նման փոքր շիմանմը կարօտ է , որ ինքնին բռնկի եւ կենդանաւայ նոյն երանելի Թարգմանչաց ոսկեղնիկ դարու ուսումնասիրութեան եւ լուսաւորութեան ոգին . շուտով պիտի հանէ յարեւանկէց ետեւ Այրարատ շատ քերթող մովսէսներ , եղիշէներ , եղնիկներ եւ անյաղթ Դաւիթ փիլիսոփաներ :

Ետը փորձը առաւ Վ . Պօլտոյ դաղթական Հայ Ժողովուրդըն . այն՝ որ 20 տարիէն առաջ զարմանալեօք կ'խօսէր Պաղտասար , Գէորգ պատուելիներուն եւ ուրիշ քանի մը բանդէտ աղգայնոցը վրայ , հիմայ շատ քաջ մատենագիրներ ունի իւր միջէն ելած . թէ եկեղեցական եւ թէ աշխարհական կարգէ ,

ընտիր լեզուագէտներ , բանիբուն վարդապետներ , շատ բնա-
գէտներ , ազգային սիրովն վառված ուսումնականներ , եւ ե-
տեւէ ալ շարունակաբար ընտիր ընտիրներ երնելու վրայ են .
լաւ մտածելու է եթէ այս քսանամեայ շրջանն եռապատկի
եւ քառապատկի , ո՛ւր արգեօք կհասնի ազգիս գրագիտու-
թեան եւ ուսումնականութեան աստիճանն . ինչ բարիք պիտի
չըկարողանայ իւր ձեռքը բերել , ինչ քաղաքականութիւն եւ
խաղաղութիւն պիտի չըվայելէ . ասիկայ յայտնի բանէ . ահա
ասոր համար է , որ անդադար կ'դրեն , կ'խրախուսեն՝ կաղա-
չեն ազգային օրական եւ ամսական գրուածքներ , Արշալոյս
Մասեաց Աղաւնին , Արծիւ , Մասիս , Մեղուն եւ այլքն :

Արեմն ջանալու է ոչ միայն ազգային նոր հիմնարկու-
թիւն մը հաստատել , այլ աւելի ջանալ նոյն հիմնարկեալն 'ի-
յսրատեւ շարունակութեան պահել . ժամանակն է ազգասիրի
նպատակն պսակօղ . շարունակ հոսած ջուրն՝ պինդ քարերն
անգամ կ'մաշեցունէ . շարունակ ճանապարհորդողն՝ իւր նը-
պատակին կ'հասնէ :

Արեմն՝ իրաւունք չունին այն ոմանք , որ կ'սեն թէ ինչ է
այս՝ ազգին ստակն կերթայ՝ բանմը յառաջ չիգար , ո՛ւրէ ին-
չո՛ւ համար չի պայծառանար ազգերնիս . միշտ ուրիշ գիտու-
թեամբ լուսաւորուած ազգերուն ունեցած յառաջադիմու-
թիւններէն ետ մնացած եմք :

Պիտեմ , ազգասիրութիւն աշխատութիւն կայ 'ի սրտէ , ըս-
տակ ալ չիխնայուիր , բայց ինչ օգուտ մէկ հիման վրայ շա-
րունակելու երկայնամտութիւն չիկայ , որ շինուածն ալ 'ի կա-
տար հասնի . Տէրունական խօսացը համամեմատ , « 'իհասանել
նեղութեան կամ հալածման վասն բանին վաղվաղակի դայ-
թակղին » ինչու որ՝ երկայնամիտ համբերութիւն չիկայ . Պօղոս
առաքելոյ խրատին լաւ ականջ դնելու է որ կսէ , երկայնա-
միտ մշակն միայն կարօղէ վայելել իւր այգոյ ուշ կամ շուտ
հասուցած պատուական պտուղն :

Արիւրի գանկատող , եկուր ուրեմն ազգասիրութեան աշխա-
տութիւնդ եւ ջանքդ շարունակութեան մէջ դիր՝ հաստա-

տուն. այն ժամանակ շուտով կը տեսնաս զգալի կերպով ազդիդ. շուտ շուտ յառաջագիմուկութիւնը եւ անոր համար ծախուած ըստակներու գեղեցիկ պոռուղն. պիտի տեսնես Ազգային դրա-
դիտութեան ոսկեղինիկ դարն եկած հասած, եւ Այրարատայ
կողերուն վրայ կրկին դունով պիտութեան զմայլեցուցիչ ծխ-
ածանըն գեղեցիկ փալիւրն կամարներ կապած : Այն երանե-
լի ժամանակին պիտի մոռանայ Հայաստան եւ չիպիտի բնէ
թէ ես եմ այրի, ես եմ փայտ չոր, այնչտի դաւիթ անյազմ,
ներ պիտի հասցնէ՝ մինչեւ որ քո սիրտդ ալ շատերու հետ
զմայլած՝ պատարուն սիրով գոչէ՝ փառք, քեզ Հայաստան,
փառք քեզ երկիր օրհնութեան՝ արդանդ բարեպտուղ :

* * *

Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՒԻՆԵԱՑ

ՏՐԻԱՏ ԱՐՀԱԿՈՒՄԻ ՄԵԾԱՀԱՒԱՏ ԲԱԶԱԿՈՐՈՎ ԵՒ

ՊԱՆԾԱՒԻ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՅ :

Ի վերայ պանծալի թաղին Արշակունեան իրբեւ զլոյս զո-
ւարթացուցիչ անդին ակն պատուական փայլեցաւ 'ի մէջ
Հայաստան աշխարհի հզօր հսկայն Տրդատ, որն որ իր թէ հո-
գւոյն եւ թէ մարմնոյն կողմանէ՝ ունեցած ձիրքերը քաջու-
թիւնները եւ առաքինական գործքերը տեսնող օտար ազգաց
ստորագրութեան դովեղի եւ երեւելի առարկայ մը ըլլալով,
իրենց պատմութեանց մէջ շատ տեղ բռնած է. ահա այս եւ
րեւելին 'ի դիւցադունա աշխարհի քաջակորով հսկայիս՝ մեր
բոլոր Արշակունի թագաւորներէն աւելի ընտիր եւ գովելի
յատկութեամբ զարդս ըլլած ըլլալուն համար, մեր երանելի
սուրբ Մովսէս Խորենացի պատմիչն ալ՝ անոր վրայ գովառա-

նական ճառեր շինելու ունեցած եռանկը իմացնել ուղեւորի,
 եւ միանգամայն իր պատմադրութեան համառօտ ոճէն դու-
 րս չելլալը իրեն սահման դրած ըլլալը յայտնելով կրսէ թէ,
 « Պատմութեանց եւ ոչ դովեաօից է ժամանակս : »

Եւ այս Հայկազանց պարծանք եղող հսկայն էր որ՝ եր-
 րոր Թագաւոր չեղած Հռովմ գնաց՝ առանց իր ուլ ըլլալը ի-
 մացունելու Լիկիանոս անունով Հռովմայեցւոց մեծ իշխանին
 ծառայութեանը մէջ մտաւ, եւ իր ցըցուցած առաքինու-
 թիւնները եւ անհամեմատ ու ժէն եւ քաջասրտութենէն ար-
 տադրեալ սքանչելի մեծամեծ քաջութիւնները՝ անցած զա-
 ցած երեւելի համբաւաւոր հսկայները յիշեցնել կուտար, եւ
 իր նշանաւոր դործքերովը անոնցմէ ալ աւելի գերազանց ըլ-
 լալը կը վիայէին, ինչպէս որ Խորենացին կը նկարագրէ ըսե-
 լով թէ, երբոր մեծ հրապարակի մը մէջ իր նախանձորդ-
 թշնամուցն մէկը կտոքով անցնելու ժամանակը վարպետու-
 թեամբ մը առաջ անցնելով Տրդատը խայտառակելու համար
 վար ձգեց, ան ալ յանկարծ սաստիկ տրագուծութեամբ կատաղի
 ձիերով լծուած վազող կտոքին ետեւէն հասնելով բռնեց ու
 ժէկէն ՚ի մէկ կայնեցւոց, այս յանկարծական հիանալի տե-
 ասանը բոլոր Հռովմայեցիք զարմացուց :

Եւս առիւծանման եւ առաւել քան զայն հզօր Տրդատն
 էր այն՝ որ Խորենացին կրսէ թէ, երբոր Պոռթոս կայսեր զօրքը
 պատերազմին ատենը սովի պատճառաւ ապստամբեցան, զինքը
 ու իր իշխանները պաննեցին. բայց հաւատարիմ քաջ պահա-
 պանն Տրդատ՝ նոյն միջոցին ոչ թէ Թողուց փախաւ, ոյլ Լի-
 կիանոսի դրանը առջեւ երկաթէ պարապի նման կեցած իր տէրը
 պաշտպանելով չթողուց որ մէկը ներս մտնէ : Եւ պատերազ-
 մին ժամանակը ձիերուն խոտը լնկեցած ըլլալով՝ թշնամուցն
 պարապէն անդին անցաւ՝ եւ այն տեղի յիշուած խոտերը
 պահապաններով ու շներով մէկ տեղ պարապէն սողին նեանց :

Եւս պանծալի հսկան էր ինչպէս որ կրսէ թէ, Աերասոս
 արդիայցին յօրութիւն ալ գերազանցեց. վասն զի այն՝ միայն
 եզին ոտքին պճնղը փրցնելու կարող եղաւ. բայց սա՝ վայրե-

նի ցուլերու հետ կռուելու ատենը եղջիւրներէն բռնելով
 թոթովեց ու վրցուց :

Երկրորդ վահագնոյ Տրդատայ յառաջագլխի նահատա-
 կութիւնն էր որ նոյն անկարծելի նոր օրինակ պատերազմին
 ժամանակը՝ Հռովմայեցիք յաղթուելու վտանգէն ազատելէն
 ետեւ փառաւորեց՝ եւ թշնամին ալ կորագլուխ քրաւ . այս-
 ինքն Երբոր Գլխացւոց ուժի կողմանէ համբաւաւոր Հռէ-
 անունով քաջ թագաւորը Դիոկղետիանոսին առաջարկեց որ
 երկուքը առանձին մենամարտութիւն ընեն, եւ ով որ յաղ-
 թէ՝ յաղթութիւնը անոր կողմը անցնի . եւ ան ալ մտածելով
 որ ինքը չէր կրնար եւ բոլոր զօրացը մէջ ալ անոր հետ մե-
 նամարտելու կարող մէկը չգտնալով, Վիկիանոսին առաջարկու-
 թեամբը միայն հռչակաւորին Տրդատայ յանձնեցին այս գոր-
 ծը , որն որ արագահաս արծւոյ նման վազեց Հռէէին վերայ՝
 եւ պատերազմելով բռնեց զինքը կապեց ու Դիոկղետիանոսին
 դիմացը բերաւ :

Երբոր Հայկազունք այս քաջագործութեանց փառաւոր
 լուրերը որ կը լսէին, որչափ սրտերնին կը սուգորէր կը վառէր
 կը ցանկային եւ կը փափաքէին , թէ ե՞րբ պիտի տեսնան այն
 ազնուական Արշակունի հսկային իր գահը նստիլ՝ եւ ընդհա-
 նուր ազգը թշնամիներէն պաշտպանելը . երբ պիտի տեսնան
 երբ պիտի վայելեն այն երջանիկ ժամանակին պտուղները :

Կատարուեցաւ արդեօք այս օրինաւոր փափաքնին :

Այո՛,

Երբոր Հռովմայեցիք վերոյիշեալ յաղթութիւնը քաջին
 Տրդատայ ձեռքով ստացան, Դիոկղետիանոս եւ իր իշխանները
 լսեցին որ , Տրդատ Արշակունեաց ազնուական ցեղէն է , եւ
 միանգամայն անոր փառաւոր գահին ժառանգն է . վեհանձն
 դիւցազնոյս ըրած բարերարութիւնը իրենց ազնիւ բարի եւ
 երախտադէտ սրտերնին շարժեց . արդարեւ կրնային մէկ երե-
 ւելի պաշտօն մը տալով վարձատրել եւ քովերնուս չհեռացը-
 նել այնպէս հաւատարիմ եւ քաջ անձը՝ իրենց տէրութիւնը
 խիստ օգտակար անդամէ մը զրկել չուզելով . բայց մտածե-

ցին որ ազնուականութեան բուն յատկութիւնն է ուրիշին բարեբարութեանցը եւ երախտեացը պարտական շննալու համար լի ու լի գոհացուցիչ կերպով վարձատրելը, ապա թէ ոչ իրենց կայսրութեան անուանը փառացը քաղաքականութեանը մեծ նուաստութիւն կը բերէ. այս ազնիւ խորհրդածուծեամբ ուրախութեամբ եւ գոհ օրտով Դիոկղետիանոս կայսրը թագաւոր անուանեց զՏրդատ, եւ շատ ընծայներ տալով, բազմութեամբ զօրաց փառօք եւ զարդուք դէպ 'ի Հայաստան խրկեց. որ իր հայրենեացը անտերունջ մնացած դահը եւ ժողովուրդը պաշտպանէ : Որչափ անպատմելի ուրախութիւններ զգացին ցնծացին բոլոր Հայկազունք՝ երբոր լսեցին այնպիսի հզօր միահեծան թագաւորի մը փառօք զարդարեալ գալուստը. թնտաց գոռաց բոլոր Հայաստան, եւ բոլոր հայաւալ ազնիւ նախարարները հրճուելով ուրախութեամբ մինչեւ Ահարիսայ երթալով դիմաւորեցին զինքը, եւ ըստ սովորութեան Արշակունեաց՝ Սմբատայ Բագրատունւոյն ձեռամբ կրկին անգամ պսակեցին զինքը թագաւոր Հայաստանի, եւ իր փառաւոր դահը նստեցուցին, որն որ իր քաջասրտութեամբը անհամբաւատ ուժովը եւ հանձարովը նոր արեւ մը ծագեցաւ Հայաստանի. որ բոլոր թշնամեաց ռեսակալ սրտերը յուսահատեցուց եւ կորագլուխ ըրաւ, ինչպէս որ Պարսից Շապուհ թագաւորը այս դիւցազնոյս հետ պատերազմելով յաղթուեցաւ՝ եւ անկէց ետեւ այնպէս հսկայի մը դէմ ըրած յարձակումը յանդգնութիւն սեպելով զիջաւ՝ եւ հաշտութիւն ուզելով խաղաղութիւնը հաստատեցաւ :

Եւ այս սքանչելի հզօր թագաւորն էր որ հիւսիսային խառնիճաղանճ ազգաց Հայաստանի պաշարելը տեսնալով, իր մեծամեծ բանակներու զօրութիւն ունեցող ուժովը՝ ոչ ինչ պատրաստութեամբ մը Սկիւթացւոց Գեդուհհոն քաջ զօրավարին սուղի անդամուն յաղթելէն ետեւ, երկրորդ պատերազմին մէջ ալ այնպէս ուժով մը ինջեցուց թուրը որ՝ մէկ հարուածով Գեդուհհոնը ու իր նստած ձին երկու կտոր բաժնեց :

(1) արմանալի էր եւս Տրդատայ կրօնասիրութիւնը. որ իր

Հեթանոսութեան մէջ ունեցած աստիկ կռամուրութեամբը՝
այն նախախնամութեան այս սիրտը ազգին քրիստոնէական
լուսաւորութեանը համար պատրաստած հրեշտակն ՚ի մարմնի
սրբոյն Գրիգորի երբոր չկրցաւ համոզել իր կռապաշտութեան
ամենաչար ոգեկորուստ կրօնքին դառնալու, բազմաթիւ տե-
սակ տեսակ չարչարանքներ տալէն ետեւ՝ Արտաշատու խոր-
վիրապին մէջ նետել տուաւ : Բաւական չեղաւ իրեն այս
դատապարտելի դործը, Սուրբ Հովհաննէ կոյսն ալ իր ցան-
կութեան չար կամացը հնազանդեցնելու կարող չըլլալուն
համար՝ թէ կոյսը եւ թէ անոր նման կուսակիցները չարչարել
տուաւ ու նահատակեց : Ալ անկէց ետեւ պատուհասեցաւ
Աստուածային պատժովը, որն որ խորի կերպարանք մօցներով՝
բոլոր ազգը սուգի եւ տրամուլեան մէջ թաղուեցաւ : Բայց
Աստուածային նախախնամութիւնը այնպիսի կռամուր ազգ մը
փրկելու համար՝ յայտնի հրաշքներ ցրցուներով, տասնըհինգ
տարիէն ետեւ Տրդատոյ բրոն Խորովիգուխտին Հրեշտակ
խրկելով զգացուց իրեն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ
կենդանութիւնը, եւ Աստուածային հրամանը մկէն կատա-
րելով՝ հանեցին խորվիրապին չարքառասաններորդ առա-
քեալն սուրբն Գրիգորը, եւ պատուհասեալն Տրդատ իրեն ըն-
տանեօրը նախարարներովը եւ բոլոր ժողովրդովը կը փայտին
զոտիւք նորոյս Մովսիսի կը փոզօրէին ու կաշաղակէին ըսելով
թէ, Կործանէ մեր կուսքերը՝ որոնք որ մեր հոգւոյն եւ մար-
մնոյն կորստեանը պատճառ եղած են . ուստ մեզ զհաւատա-
բրխտանէութեան, ուստ մեզ զսուրբ պատուէրան աւետարանին
-Քրիստոսի : Եւ հոգւով սրբով լցեալ սուրբն Գրիգոր աղօ-
թելով եւ բարեմաղթելով առ Աստուած, բժշկեց զՏրդատ իր
մարմնոյն պատուհասէն, զինքը ու բոլոր ազգը մկրտելով եւ
քարոզելով աւետարանին -Քրիստոսի պաշտօնեայ բաւ :

Ահաւասիկ -Քրիստոս փրկիչն մեր՝ ՚ի տեսեալնն սրբոյն Գրի-
գորի երեւալով ոսկի ուռամբ կռոց կործանմանը առաջին սկզբ-
նաւորութիւնը ինքը կրնէ որ, այնուհետեւ անկանքներէ ըլլոյ
կռապաշտութիւնը Հայոց ազգին մէջ, այն երկնաւոր ճարտա-

բազմաթիւ Բրիտանոս նորոյս խորայն չափազանց Ժողովրդեան հոգիւ կարդեալ նորոյս Մովսիսի Սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ նոր տապանակին սուրբ Էջմիածնայ ձեւը ցըցունելով, կը հրամայէ իր ընտրեալ Ժողովուրդին որ այնպէս խաչաձեւ գմբեթազարդ եկեղեցի կանգնեն : Եւ ինչպէս Մասիսի վերայ եղաւ մարդկանց ջրհեղեղէն փրկուելու տապանը, այնպէս կը տնօրինէ որ , զարձեալ նոյն սուրբ լեռանը քովը՝ Արարատին մէջ շինուի կառապաշտութեան մեղաց ջրհեղեղին մէջ խղաղող ազգի մը երկնապարգեւ փրկութեան տապանը մայր Եկեղեցին : Եւ հազարապետն Բրիտանոսի սուրբն Գրիգոր՝ Աստուածային հրամանը ՚ի գործ դնելով, այն դասնչելի եւ երկնանման սուրբ տաճարին հիմնարկութիւնը սկսեց : Ահա այս միջոցիս , Տրդատն այն որ Ժամանակ մը հրամաններ ընելով տապանային չար կամայը ծառայ եղած անոր բնակարանը զարդարել կուտար՝ եւ Բրիտանոսի սուրբ Եկեղեցին կը հալածէր , ահա հասած էր իրեն այն երջանիկ Ժամանակը որ՝ Հոգւոյն սրբոյ շնորհօքը լցեալ եւ զարդարեալ, Բրիտանոսի պաշտօնէին հետ գործակից եղած՝ Աստուածաբնակ տաճարին շինութեանը համար բոլոր ընտանեօք նախարարօք եւ Ժողովրդովք հողի ու մօխի մէջ մտած՝ Եկեղեցւոյն շինութեանը համար նիւթ կը պատրաստէր , եւ իր բնական ուժին համեմատ՝ ահադին մեծամեծ սիւները ուսին վրայ բարձած քրտամբ եւ աշխատութեամբ ամենայն սիրով տուն Աստուծոյ կը կաղմէր : Արդարեւ Միտմնակ Սուրբ Եկեղեցւոյս շինութեանը համար թէ ըստ հոգւոյ եւ թէ ըստ մարմնոյ ազնուացեալ արդարացեալ մեծացեալ եւ փառաւորեալ Թաղաւորի մը նախարարներու ու Ժողովրդոց սպասաւորութիւնը եւ ծառայութիւնը կը վայելէր :

Այն նահապետն բրիտանոսեան թեանս մերոյ սուրբն Տրդատ՝ այնուհետեւ ըստ մեծի մասին ըսած բարեկարգութիւնները եւ աշխարհաշինութիւնները ՚ի հոգեւորս եղաւ : Եւ սկսեց սրբոյն Գրիգորի հետ գործակից ըլլալով, բնաջինջ ընել բոլոր կրօնատունները եւ անոնց տեղը եկեղեցիներ կանգնել : Յիշա-

ւի իր առաքինադարդ եւ շնորհալի վարուքը ընդհանուր Հայ-
 կազանց մեծաց եւ փոքունց Աստուածապաշտութեան ընտիր
 օրինակ եղաւ, բայց իր բարեյորդոր խրատները անզգաստից նա-
 խարարաց ոմանց չար գործոցը յանդիմանութիւն մը սեպուե-
 լով՝ ատելութեան ոգւով ախտացան, վասն զի՝ շատ ծանր եւ
 կաւ իրենց ճշմարտութեան ձայնին մօտիկ ընելը . Տրդատ ալ
 խրատելէն ձանձրանալով ձգեց թագը եւ Լուսաւորչայ բնա-
 կած այրը գնաց . նոյն չար նախարարները քանի մը անգամ
 կանչեցին զինքը որ կրկին աթոռը նստի, Տրդատ ալ յանձնա-
 ռու չըլլալուն համար՝ աւանդ որ մօլի եւ չար անձինք՝ առանց
 արդարութեան խղճին ձայնին ականջ գնելու թիւնաւորեցին
 իրենց այնպիսի Աստուածապաշտ սուրբ եւ բազմերախտ թա-
 գաւորը : Այն քարացեալ անողորմ սրտերը չզգացին Աս-
 տուածային երկիւղը, թէ հոգւոյ եւ թէ մարմնոյ կողմանէ
 բոլոր Հայկազանց պաշտպան կեցող հօրէ մը թագաւորէ մը
 զբկեցին ընդհանուր Հայաստանը . այն ապերախտ հրեշները
 չձանչցան իրենց բարերարը . այն՝ որուն միայն անուներ ու
 համբաւը Հայաստանի բոլոր թշնամեաց դէմ երկաթէ պա-
 րիսպ եւ սպառնալիք մըն էր . բոլորովին հոգւով եւ մարմնով
 կուրցան իրենց աչքերը՝ եւ չտեսան Հայաստանին վերայ ծա-
 գած այն արեգակը որ, իր բոլոր Աստուածապարգեւ զօրու-
 թիւնը անոր երջանկութեանը համար գործածեց եւ փառաւո-
 րեց ընդհանուր ազգը : Լռենք այս տեղը քիչ մ'ալ՝ եւ հը-
 րապարակաւ մեծ հանդէսով մօտիկ ընեմք ուշադրութեամբ
 Արարատեան հրաւիրակին ոսկի թելերով չիւսուած՝ Հայկա-
 զանց ողին արգասաբեր Հայաստանի սիրոյ պատուական գի-
 նիովը զմայլեցնող եւ ուրախացնող օրհնեալն 'ի տեսունէ այն
 բազմրանեւագ քնարը որ, Տրդատայ փառքերէն սկսեալ կեր-
 դէ ըսելով .

Ուր ('ի վաղաբարձութեամբ) 'իդահոյս դերակայ փայլէր Տրդատ կայսե-
 րական ջիւղէն շուրջ աւագանիս զնախարարս եւ զոստանիկս
 Զարեքհարբար պետս սոխարհաց եւ կուսակալս պար ունեւով
 Ինքն 'ի մէջ ըզվեհային գլուխն ամբարձեալ հանդոյն Մասեայ

Առ թողիք հազարաւոր լերինք եւ բլուրք խոնարհագոյն :

Սառ զերդ լուսին լըրացեալ 'ի կամարին աստեղազարդ ,

Որ զիւրեւ բակ բոլորէ զբոյր աստեղաց ճաճանչաւոր :

Յայնժամ էր տեսանել աստ մեծ ատեան հիապատում :

'Նախարարքն արքայաշուք երբ զարդարեալ կարգ ըստ կարգի՝

կապելով ըզպատուաւորսն եւ զոսկեղէն խոյրն 'ի վերայ

եւ ամեալ ընդ մէջ կամար ոսկիակուռ ականակապ

Ըզթիկամբք արկեալ աստոյրս եւ Կուսմարտակո 'ի պարանոցս

Այնպէս փառօք եւ շքով մրտանէին 'ի յայս քաղաք

Իսպասու կալ հրամանին պերճացելոյն իշխանասաստ : . . .

Եւ հա այս փառքերը ցնծալից ուրախութեամբ նուազեղէն ետեւ՝ եղանակը փոխելով քնարին հետ ողբաձայն կերգէ այն եղեւնագործութեան այն աղաւաղելի սրտակեղ կորուստին վերայ՝ բոլոր սրտերը 'ի լաց շարժելով կրսէ :

Յորժամ Վէս վաղարշապատ զոճիր ահեղ մշտաբերեաց ,

Տիրանեղ եւ դաւաճան գրտաւ յարքայն իւր Տըրգանտէս ,

Ջջահըն շիխոյ գերալոյս մահուն ըզդեղ մատըռուակեալ :

Յայնժամ եւ զիւրեւ այս օրինակ պատեսաց խաւար :

Ոչ գիտաց ուշակորոյսն թէ իւր փառաց շուք համօրէն

Ինդ լուսով նորին փայլէր իբրու զաշխարհ առ արեւով :

Եւ թեւոյն պարթեւական, որ պարփակեալ պաշտպանէր զինքն

Լարեալ զաղեղ նենդութեան՝ նետ դիպեցոյց եւ խոցոտեաց :

Ջհովանին գըլխոյն իւրում արհամարհեաց ողորմելին


Այսպէս խարշեալ 'ի տապոյ թօթափեցան փառաց ծաղիկք ,

Այլ ընդ այս ես շատ լացից երբ ըզշիրիմ սրբոյն գըրկեմ :

Այս վատթար նախարարները անոնք էին , որոնք որչափ որ քրիստոնեայ եղած էին՝ տակաւին հեթանոսութեան շուրջը իրենց մոտացը մէջ տպաւորուած էր : Արդարեւ այսպիսի դաւաճանաբարոյ մարդկանց անողորմ եւ աստուածամարտ գործքերը ընթերցող սիրելի ազգայնոց սրտերը կայրէ ու կը տրտմեցնէ , բայց մէկ կողմանէ ալ պէտք է ուրախ ըլլայ որ , այսպիսի եղեւնագործներ շատ բիշ եղած են մեր ազգին մէջ վաւրն զի քանի որ քրիստոնէական լուսաւոր եւ սուրբ կրօնքը

արմատացաւ, աստուածպաշտութիւնն բարեպտուութիւնն ու խիղճն ալ թագսւորեց մեր ազգին վերայ առաւել քան զամենայն ազգս, որն որ քրիստոնէութեան ազդեցութեամբը աւելի երեւելի եղաւ թէ քաղաքակրթութեան եւ թէ ազնուաբարոյութեան մէջ. ահա այս լուսաւորեալ դարուս մէջ ալ իրեն յառաջագիւծութեանը եւ լուսաւորութեանը՝ զգալի կերպով մեծ դիւրութիւն ընծայած եւ նպաստաւորութիւն ըրած է, եւ ասկէց ետեւ ալ պիտի ընէ Աստուծով :

Տ. Կ. ԴԱԼՓԱԿՃԵԱՆ :



Դ . ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵՈՒՆՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՎՔ

Ազնուաբարոյ մարդը՝ ուրիշին որ եւ իցէ ունեցած բարութեանը բնականաբար չնախանձելէն զատ՝ նոյն բանին վերայ աչքերը տնկելով չդիտէր եւ տեսնալու ալ չփափաքիր . նա եւս նոյն բարութեան տէր եղող անձին բնութեանը պահանջմանցը նայելով, թէոր հարկը պահանջելու ըլլայ՝ առանց իր ազնուութիւնը թեթեւութեամբ մը յայտնելու՝ նոյն բարութեան վերայ պարզ կերպով նայելէն անգամ կ'զգուշանայ, որ չըլլայ թէ նախանձող եւ հետեւաբար վատազգի մեկու մը պէս երեւնալու կասկած տայ. որ իր վեհանձնութեանը ամենամեծ ամօթ եւ նախատինք կը սեպէ : Ասանկ մարդուն իրեն բնական յատկութիւնն է որ ուրիշին ստացած բարութեանը համար խնդակից եւ ուրախակից կըլլայ : Ահա ասանկ առաքինի պատուոյ արժանի ազնիւ անձը բնաւ ուրիշին

հարստութեանը վրայ չսքանչանար . թէ աղքատ ըլլայ եւ թէ հարուստ մի եւ նոյն է իր աչքին առջեւը . միայն թէ ով որ ըլլայ՝ անոր ունեցած սուսքինութեանը ձրկցը եւ իմաստութեանը կը նայի . եւ այս բարութեանցը համար՝ առանց ցածութեան կը սիրէ կը պատուէ ու ետեւէն ալ չափաւոր կերպով կը գովէ :

Որովհետեւ քանի որ մարդս կատարեալ ըլլայ՝ այնչափ ալ սիրելի կըլլայ , ընդ հակառակն որչափ որ պակասութիւն ունենայ՝ մանաւանդ թէ խօսքով ալ յայտնէ , այնչափ ալ իր ընկերին մեծ բեռ մը ըլլալը զգալի կերպով յայտնի ընելով՝ հետեւաբար ատելի կըլլայ . բայց այն ուրիշ բան է որ երբոր հարկը պահանջէ քաղաքավարութեամբ իր անձին տկարութիւնը կը խոստովանի . որ ասով ալ ամենէն աւելի սիրելի կըլլայ :

Իր ազգին դէմ՝ չարութիւն ընող եւ մանաւանդ օտարաց առջեւ անոր վատանուենութիւն բերող բամբաստող եւ պախաւասկող մարդը , սոսկալի գիշատիչ գազան՝ ու անխիղճ արիւնհարութեամբ մըն է որ , բիւրաւոր անձանց անունը կը գողնայ եւ անմեղները կը մահացունէ . ահա ասանկ մարդը կամ չմարդը , իր ազգին ստելի ըլլալէն ետեւ՝ հետեւաբար իր անձն ալ մեռուցած կըլլայ , վասն զի այն օտարները որ իր զուրկածներուն առ երես սիրով մտիկ կընեն՝ իրենց մտօքը՝ նստեալ զեղբօրէ զազգէ քու մէջ չարախօսես , կարծեցեր անօրէն ՚ի մտի քում թէ եւ մէք քեզ նմանիցիմք ըսելով , ատելութեան ու անարգութեան դժոխքը կինջեցնեն զինքը :

Ստութիւնը խորամանկութիւնը իրեն պարծանք սեպող ախտացեալ անձը , ինքզինքին մեծ թշնամի մըն է . որովհետեւ մէյ մը որ իր կեանքը անհանգստութեան կը մատնէ . երկրորդ՝ իր անձնական ապրուստը վտանգի մէջ կը դնէ . երրորդ՝ իր կասկածելի վարմունքովը եւ անունը աճուրթ (մեղաթ) հանելով հրապարակաւ կը խայտառակուի : Ասանկ մոլութեան տէր եղող մարդը , իր ազնուական համարձակութիւնը բնականաբար կորսնցնելով՝ պատուաւոր եւ ճշմարտասէր անձանց

անջեւ միշտ կորագլուխ եւ անպատիւ է :

Բուն խելացի եւ խորագէտ մարդը այն է որ, իրեն պատ-
ւոյն անուանը վատանունու թիւն մը չբերելու համար՝ որ եւ
իցէ գործոցը մէջ պահատու թիւն մը անիրաւու թիւն մը ընելէ
միշտ կզգուշանայ . ասանկ մարդը թէ համարձակ է եւ թէ
ազնիւ :

Ասուտուն լոյսը ճառագայթելէն կամ արեգակը ծագե-
լէն ետեւ՝ անկողինին մէջ ծուլու թեամբ քնացող մարդը ձա-
ռոտ աչքերը եւ միանգամայն իջցած ականջները բանալէն
ետեւ, կը տեսնայ որ երկինքն ու երկիրս իրեն ծուլու թեանը
վրայօք տեսակ տեսակ յանդիմանու թիւններ կը կարդան . այ-
սինքն նախ արեգակը իր ճառագայթները աչքը խօծելով կը
խթէ . թռչնոց քաղցրանուագ երգերը եւ ժրաջան անձանց
ձայները կը վիրաւորեն ու կը տրտմեցնեն իր անգեղջ սիրտը :

Բայց կանոխ ելլալը իր սրտին ու մտքին մէջ բարու-
թիւններ երջանկու թիւններ զգալու բնականաբար մագնիսա-
կան գորու թիւն մը ոտանալով, ու լախու թիւնը ու խնդու թիւնը
իրեն կը բաշէ եւ աւելի կայտառ ու աշխոյժ կըլլայ, եւ իր
ստի օրվրնէ ունեցած դաւերն ալ կը թեթեւայ կամ բոլորո-
վին կը վարատելի ու կը միխթարուի . ահա այս միջոցիս մէյմը
որ՝ Աստուած փռաբանելու եւ անոր բարերարութեանցը
վրայ շնորհակալ ըլլալու պարտականութիւնը կզգայ . երկրորդ-
իր խորագլու թեան լուսով լուսաւորեալ եւ կակղացած մտայր
մէջ՝ որ եւ իցէ ուսմունք եւ գիտութիւնք բարի վերայ փո-
լուելու պէս կը տալաւորուին :

Նուրութեան բուն աղբիւրը անմտութիւնն ու թանձրա-
մտութիւնն է :

Թէ որ աղքատութեան վտանգին մէջ իյնային տապահով
ըլլալ կու գէտ, աղքատները սիրէ՝ անոնց վերայ զթան ու ողոր-
մէ աստուածեանութեամբ . եւ մտտանջու թեամբ աշխատելով
անոնց երջանկութեանը համար մտածէ ու հոգ տար :

Արեւ իցէ կրօնքի որեւ իցէ ազգի եւ մարդու՝ ասանց
խտրութեան ոլորովիլը եւ բարերարելը գործ Աստուծոյ է :

Մարդատէր մարդուն մօքէն անդամ չանցնիր թէ այս ինչ այն ինչ մարդը սիրելի կամ յարգելի չէ. վասն զի Աստուածային արարածոց մէջ ամէնէն գերազանց եւ ամենաընտիր է՝ ակ մարդկային ազգը ըլլալը շատ աղէկ հասկցած եւ ճանչցած է . ահա ասանկ առատասկստ եւ եռանդուն մարդուն աչքին ամէն մարդ ամէն ազգ յարգի եւ սիրելի է , եւ ամէնն ալ իր գթոյն եւ սիրոյն իրաւամբ արժանի կը դառնայ :

Մարդատէրին բնական առաքինութիւն մըն է որ ուրիշին պակասութեանցը միշտ աչքը գոցելով՝ անոր ընտիր յատկութիւնները եւ բարութիւնները միշտ կը տեսնայ եւ իր սիրոյն դիմաւոր պատճառ մը կրնորէ , ահա ասանկ մարդը՝ թէ Աստուծոյ հաճելի եւ թէ մարդկանց առջեւ գովելի եւ փափուկ եղած առաքինազարդ պարզութեամբ , արժանապէս կը վայելէ այն ցանկալի ազատութիւնը եւ երջանկութիւնը՝ սրտի հանդարտութիւնը՝ հանգստութիւնը՝ խաղաղութիւնը եւ երջանկութիւնը : եւ մէկ խօսքով մարդիկ իրեն համար մէյ մէկ ուրախութեան զուարճութեան սիրոյ եւ մխիթարութեան առիթներ են՝ ու ամէնուն ալ բարեկամ եւ սիրելի է :

Մարդատեսաց մարդը անսակ մը կուսպաշտ է որ՝ իր անեղութեան սրովը Աստուծոյ ամենասիրելի արարած եղող մարդս՝ առանց խղճի միշտ դիւաց կը զոհէ :

Նիւորձ մարդը անխոհմտութեամբ ձի վազցնող անտուր ձիավարի մը կը նմանի որ , երբեմն տղմի մէջ եւ երբեմն ալ երեսը յարդուէ ծածկուած լծերու մէջ կիյնայ : Բայց խոհմը միշտ զգոյշ ըլլալով՝ չղիտցած ճանապարհէն առանց հրմուտ առաջնորդի չերթար :

Սոյն գործը որ դուն չես կրնար ընել եւ ուրիշին կը յանձնես , մինչեւ որ դուն ալ նոյն բանին անձամբ հոգ չտանիս եւ ուշադրութիւն չընես՝ այն մարդուն քրտմին զօրութիւն տուած չես ըլլար . եւ հետեւաբար գործն ալ քու չուզած կերպովդ ժամ մը առաջ կատարելութեան կը հասնի ու կը լմննայ :

Որ եւ իյէ բանի մը կորուստը սաստիկ փութորկի մը կը

նմանի որ, առջի անգամուհի տաժանեղի ցաւերու ալիքներ կը
յարուցանէ մարդու սրտին վերայ . բայց ժամ ժամանակ օր
անցնելով, այն անտանեղի ցաւը կանցնի եւ խաղաղութիւնը
կը տիրէ . ուրեմն համբերութիւնը խիստ հարկաւոր է :

Չարութիւնը բարութեան՝ խաղաղասիրութիւնը խռովասի-
րութեան՝ վրէժինդրութիւնը . անոխակալութեան եւ գթու-
թեան՝ մէկ խօսքով որ եւ իցէ առաքինութիւն մը մոլութեան
հետ բաղդատելու ժամանակդ անգամ՝ երջակութիւն կզգաս
եւ մոլութիւնները . քարշելի կըլլան քեզի, հապա ուրշափ եւս
առաւել այն բարութիւնները ՚ի գործ դնելու ըլլաս :

Իր կրից գերի ըլլող՝ մարդը՝ այլանպակ կերպարանքովը եւ
սիրտ ծակող անիրաւ խօսքերով ուրիշները վերաւորելովը՝ կը
կարծէ թէ անով իր սիրտը կը հանդարտի, բայց ետքը կզգայ
անտանեղի խղճի խայթ եւ զղջում մը :

Սարդս աշհարհային որ եւ իցէ բարութիւն մը ձեռք ձը-
գելէն ետեւ երջանկութեան մէջ եմ ըսելով պարծենալով ամ
բարտաւանցած ժամանակը՝ անտարակոյս պէտք է ըլլայ որ
օր մ'ալ ինքզինքը թշուառութեան մէջ տեսնալով իր անմոռ-
թեանը վերայ պիտի արտասուէ ու ողբայ :

Տ. Կ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ :

ՉԵՐՁԻՆ ԲԱՆՔ ԼՐԱՑԵԱԼ ՏԱՐԻՈՑՈՒ

Լրկիր լեր ինձ ցաւակից
Ձի տրտմութեան հասի վայր .
Ժամն է յաղթող ամենից,
Որ այժմ ունի զիս գլորեւ .
Տնկոց բուսոց շատ լիցի,
Ինեւ մընալ ՚ի յաճման .
Ձի ըսպառին իմ րօպէք,

Յայլում կաղցեն 'իսպասու ։
 Մարդկան սեռից շատ ողջոյն ,
 Սացեալ մնացեն խաղաղիկ .
 Զի ես տարիս գըլորիմ ,
 Յաւիտենից անյագ ձոր ։
 Չեւ իմ լցեալ սրտի խանդ ,
 Որ առ բազումըս ծաւալ .
 Անագորոյն բախտ դժխեմ ,
 Զրկէ 'ի ձէնջ տարաժամ ։
 Արգեօք լինի՞ ձեզ ողբալ ,
 Ընդ իմ կորուստ այս յանկարծ .
 Գոնեա վասն այն երախտեաց ,
 Զոր դուք յինէն ընկալայք ։
 Երկոտասան իմ ամիսք ,
 Յորմէ յետէ կամ ծնեալ .
 Ահա այսօր հեռանամ ,
 Ի ձեր սիրուն գրկանաց ։
 Լացէք դուք զիս ով մարդիկ ,
 Զիս ըզ տարիս եղկելի ։
 Տո՛ւք ինձ այսօր ձեր ըզ գործ ,
 Զոր յիմ արեւ գործեցիք .
 Զի պահանջէ զայն յինէն ,
 Որ էակաց հանուրց Տէր ։
 Ապա եւ դուք ըզլինի ,
 Հասջիք տեղին ժամանեալ ։

Գ. ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ՅԱՅՏԱՐԱՐ ԱՌԱՋԻԿԱՅ ՏԱԽՏԱԿԱՅ :

Շարահանութիւնը
303 էրէան քէն :

Ո՛ր անոց իրաւասկարի իշխանութեանը տակ եղած այս դաւառներէս 'իզոտ' երեք մեծ գաւառ եւս կայ նոյն ծովակի տրեւմտեան հարաւային կողմն, հինգ օրեայ ճանապարհ հեռու վանկն . որոնք են, (Սարիէրք, Կէյան, Մամաքան) . Աստիք թէպէտ ըստ քաղաքականին Տիգրանակերտու իշխանութեան տակն են, բայց ըստ հոգեւորականին Աղթամարու վիճակը լինելուն համար, նոյն վիճակագրութեան մէջն անբողջապէս գրուած գտանք . այն պատճառաւ ալ՝ մեր Տախտակներու մէջն տեղի առնելու զանձառութիւն չրինք : Թէպէտ Աղթամարու վիճակին ուրիշ գաւառներ ալ կան, բայց անոնք վառէն շատ հեռաւորութեան , եւ ուրիշ իրաւասկարի իշխանութեան տակն լինելուն համար՝ չգտանք գրուած նոյն մարդտէր վիճակագրութեան մէջ :

Իսկ վերոգրեալ գաւառացի ամէն մէկի յատուկ յատուկ տեղագրական եւ հազարտական մանրամասն տեղեկութիւնք կ'մնայ եկող նոր եւ բարենշան տարւոյ տարեմօին . որ (Տաճ) գաւառէն եւ (Հայց յ'էն) սկիզբն ղնելով շարունակուի :

ՅԱՆԿ ՏԱՐԵԿԱՆ ՆՈՒԹՈՅ :

42

Նախաբան առ ընթերցողս Արծուոյն	1
Համբերութիւն կեանք է :	1

Ա. ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱՆ ՇԷՆ ՀԱՐՅՆ :

Թաղէոս առաքեալ ընդէր կաս հեռի :	27
Առաքինի վախճան. Տ . Գաբրիէլ վիճակալալ արք եպիսկոպոսի :	34
Գրիգոր լուսաւորիչ հայոց :	55
Արիստակէս, Վրդանէս, Գրիգորիա, Յուսիկ Դանիէլ որդիք եւ Թոռունք Լուսաւորչին :	83
Մեծն Նէրսէս Պարթեւ :	111
Սահակ Պարթեւ հրաշարուեստ Թարգմանիչ հայացի դպրութեան :	139
Սուրբ Մեսրոպ հեղինակ եւ գտիչ հայկական դպրու- թեան :	167
Լնճանուէր՝ աշակերտք տրոց Թարգմանչացն :	195
Մովսէս քերթողահայր ակնաղբեր հայացի դպրութեան :	223
Տարաթամ՝ պանդխտիլ հայրենասէր հօր վանուցս ՚ի Կ. Պօլիս :	229
Նղիշէ վեմախօս պատմագիր հայոց :	251
Նղիկ կողբացի ընտիր աստուածաբան հայոց :	279
Դաւիթ անյաղթ հայ փիլիսոփայ :	307

Բ. ՀԱՆԴԻՍ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ :

Հայկ նահապետ հայոց :	5
Սատարք եւ բարերարք Վասպուրական Արծուոյն :	10
Արամ հայրենասէր նահապետ :	39
Սատարիչ բարերարք հայրենեաց ՚ի վանեցւոց :	44
Արա Արամիան նահապետ հայոց :	61
Կենցաղօգուտ նոր ընկերութիւն Թեմնեաց մշակութեան :	65
Առ մեծարգոյ ազգասէր Կարապետ աղայ Թաշճի ուղերձ :	68

Դամբաճական ճառ. ասացեալ 'ի սղայի սահնակաւ	
Նիկողայոս ճարտարագիտի Օսմանեան Պետութեան :	69
Չափաբերութիւն 'ի մահ պայազատին պալեանց	
Նիկողայոս ճարտարագիտին :	72
Նախապսակ անդրանիկ թափակալ արքայ հայոց Պարոյր :	92
Մեծն Տիգրան Երեւանդեան :	120
Հայկազուն ուսումնասէրք 'ի Տփլիս :	128
Նորակառոյց վարժարան ժառանգաւորաց 'ի Վարին :	150
Առաջին եւ բարեկարգող Վաղարշակ Արշակունի	
Թագաւոր հայոց :	156
Երկրորդ գաւազան արշակունի Արշակ արքայ հայոց :	173
Արտաշէս Թեղեքանկալ Արշակունի Թագաւոր հայոց :	204
Արշակունի Բ. Տիգրան քաջապանձ արքայ հայոց :	232
Առգար Արշակունի նախահաւատ գիւցաղն արքայ հայոց :	257
Նամակ. Յիւսէիւտար հայազգի ոմն :	266
Երկրորդ արտաշէս Արշակունի բարեկարգող եւ	
պանծալի Թագաւոր հայոց :	286
Տրդատ Արշակունի մեծահաւատ քաջակորով պանծալի	
արքայ հայոց :	316

Գ. ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ :

Մայրաքաղաք յենաստանաց Վարազ :	18
Մայրաքաղաք յենաստանաց Վարդ. Եկեղեցիք :	46 74 95
Աւեր եկեղեցի. իշխանաց աղբիւր եւ վերին Վարազ :	133
Վան կամ Շամիրամակերտ :	178 211 239
Վանառայ Ակոփի :	272
Յայաարար առաջիկայ Տախտակայ :	303 330

Դ. ԲՍԻՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ :

Աշխարհս ծովու կնճանի ով որ լուղալ չի գիտեր	
կ'սեղդուի :	21
Աղէկութիւն բարերարիւ՝ գրած պահէ մեջքոյ սրտիդ :	77
Որ գործէ զերկիր իւր լոյսի հայիւ :	79
Հանդէս մարտից արդարութեան եւ անիրաւութեան :	99

Առակ . պառաւ եւ թիթեռնիկ :	106
Բարոյական առածք :	186
Վարդ եւ մացառ :	184
Չիք յաղթող դժուարութեանց աշխարհի քան զհամբերութիւն :	217
Բարոյական առածք :	243
Առակ . երկու շուն եւ դայլ :	248
Բարոյական առածք :	275
Առակ . պառաւ եւ աղախին :	276
Զոր ինչ սերմանէ որ զնոյն եւ հնձեացէ :	293
Առակ . սոխակ եւ բազէ :	296
Բարոյական առածք :	300
Առակ . կատու եւ մկներ :	302
Բարոյական առածք :	324
Վերջին բանք լրացեալ տարւոյս :	328

Ե . ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ :

Նամակ Տ . Յակոբ Վարժապետ Բահանայի	
Սղէքսանտրապօլու :	25
Յերախայրիս Արժւոյն Վասպուրականի :	53
Նամակ . Յակոբ Միրզան Մէլիք Յակոբեան :	108
Բ . Նամակ . Յակոբ Միրզան Մէլիք Յակոբեան եւ ծանուցումն նորին :	187
Պետրոս Պէյ Մադաթեանց Բնար Հայաստանի :	221 249
	278 297

ԵՐԵՍ

ՍԽԱԼ

ՌԻՂԻՂ

1

15

9

35

9

6

76

ԳՐԻԳՐ

ԴԱՆՈՍՈՒ

179

ԴԻՄԱԿ

ԴԵՄԱԿ

293

Ս

2